

«ԷԼՄԱՍԻՍ» ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՕՖԵՐՏԱ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն օֆերտայի պայմանագիրը (այսուհետ՝ Օֆերտա կամ Օֆերտայի պայմանագիր) հանդիսանում է «ՅԵՍՈՖԹ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Վաճառող») կողմից «Էլմասիս» Էլեկտրոնային կառավարման համակարգի ծրագրային փաթեթներին համապատասխան ծառայությունների (այսուհետ՝ նաև Ծառայություն) մատուցման առաջարկ (հրապարակային օֆերտա) և ընդգրկում է ծառայությունների մատուցման և դրա արդյունքում դրամական միջոցների ընդունման ծառայությունների բոլոր էական պայմանները:

2. ՕՖԵՐՏԱՅՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Սույն Օֆերտայի շրջանակներում, ներքոնշյալ հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

Օֆերտա՝ ծառայությունների մատուցման և դրա արդյունքում դրամական միջոցների ընդունման ծառայությունների առաջարկ, որը հրապարակված է Վաճառողի պաշտոնական ինտերնետային կայքում, հետևյալ հասցեով՝ www.elmasys.com,

Օֆերտայի ակցեպտավորում՝ օֆերտայի լրիվ և անվերապահ ընդունում՝ Օֆերտայի 4-րդ բաժնում նշված գործողությունների կատարման միջոցով,

Գնորդ՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը կատարել է օֆերտայի ակցեպտավորում և հանդիսանում է Վաճառողի կողմից առաջարկվող Ծառայությունների և մատուցվող՝ դրա հետ կապված այլ անհրաժեշտ ծառայությունների Գնորդ,

Օֆերտայի պայմանագիր՝ Վաճառողի և Գնորդի միջև կնքված՝ Գնորդի կողմից ընտրված ծրագրային փաթեթի և մատուցվող՝ դրա հետ կապված այլ անհրաժեշտ ծառայությունների վաճառքի և դրա արդյունքում դրամական միջոցների ընդունման ծառայությունների մատուցման պայմանագիր, որը կնքված է համարվում օֆերտայի ակցեպտավորման պահից,

Պայմանագիր՝ «ԷԼՄԱՍԻՍ» Էլեկտրոնային կառավարման համակարգի ծրագրային փաթեթների վաճառքի և դրա հետ կապված անհրաժեշտ և ընտրված փաթեթին համապատասխան ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագիր, որը կնքվում է Վաճառողի և Գնորդի միջև, որով կարող են սահմանվել վճարման չափի, ժամկետների և այլ դրույթների վերաբերյալ այլ կարգավորումներ:

Կայք՝ ինտերնետային կայք՝ www.elmasys.com, որտեղ նկարագրված են հիմնական ծառայությունների մատուցման փաթեթները:

2.2. Օֆերտայում օգտագործված այն հասկացությունները, որոնք սահմանված չեն Օֆերտայի 2.1 կետով, մեկնաբանվում են Օֆերտայի տեքստին համապատասխան:

3. ՕՖԵՐՏԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

3.1. Օֆերտայի առարկան հանդիսանում է ծառայության (Գնորդի կողմից ընտրված փաթեթի) մատուցումը Գնորդին և դրա համար Գնորդից դրամական միջոցների ընդունումը:

3.2. Վաճառողը պարտավորվում է Գնորդին մատուցել «Էլմասիս» համակարգի հետ կապված անհրաժեշտ և ընտրված փաթեթին համապատասխան ծառայություններ, իսկ Գնորդը պարտավորվում է վճարել դրա համար՝ www.elmasys.com կայքում և (կամ) Պայմանագրով սահմանված պայմաններով ու կարգով:

4. ՕՖԵՐՏԱՅԻ ԱԿՑԵՊՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՕՖԵՐՏԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

4.1. Գնորդն ակցեպտավորում է օֆերտան www.elmasys.com կայքի համապատասխան բաժնում գրանցվելու կամ հայտ ներկայացնելու միջոցով:

4.2. Օֆերտայի պայմանագիրը կնքված է համարվում Օֆերտայի ակցեպտավորման պահից և ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ընտրված փաթեթի վերաբերյալ վավերապայմանների փոխանցման պահից:

5. ԱԿՑԵՊՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ

5.1. www.elmasys.com կայքում գրանցումը կատարվում է Կայքի համապատասխան բաժնի պահանջվող բոլոր տվյալները լրացնելու միջոցով, իսկ հայտը ներկայացվում է՝ Վաճառողին տրամադրելով պահանջվող տեղեկատվությունը, Վաճառողի կողմից առաջարկվող և Գնորդի համար նախընտրելի հաղորդակցման միջոցով, որոնց արժանահավատության բեռը կրում է Գնորդը:

5.2. Գրանցվելով www.elmasys.com կայքում կամ հայտ ներկայացնելով՝ Գնորդը համաձայնություն է տալիս Վաճառողի կողմից Օֆերտայով ներկայացված պայմաններին:

5.3. Օֆերտայի ակցեպտն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից www.elmasys.com կայքում գրանցվելու կամ հայտ ներկայացնելու պահից:

6. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6.1. Գնորդին մատուցվող բոլոր ծառայությունների համար, այդ թվում՝ ընտրված փաթեթի և դրա հետ կապված մատուցվող անհրաժեշտ այլ ծառայությունների, վճարումը կատարվում է Գնորդի կողմից ընտրված փաթեթի արժեքի չափով՝ Վաճառողի կողմից դուրս գրված հետվճարային կամ կանխավճարային հաշվի հիման վրա:

6.2. Օֆերտայի պայմանագրի շրջանակներում Գնորդի կողմից կատարվող վճարումն ընդունվում է անկանխիկ՝ www.elmasys.com կայքում առկա վճարային համակարգերով կամ բանկային փոխանցմամբ:

7. ՎԱՃԱՌՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Վաճառողը պարտավորվում է.

7.1.1. Օֆերտայի պայմաններին և Գնորդի կողմից ընտրված փաթեթին համապատասխան մատուցել ծառայություններ,

7.1.2. Փաթեթի վավերապայմանները և դրան վերաբերող բոլոր տվյալները Գնորդին փոխանցել www.elmasys.com կայքի միջոցով (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով),

7.1.3. մեկից ավելի օրերի ընթացքում համակարգի անգործության ժամանակահատվածով երկարաձգել փաթեթի գործողության ժամկետը:

7.2. Վաճառողն իրավունք ունի.

7.2.1. դադարեցնել մատուցվող ծառայություններն ընտրված փաթեթի սահմանաչափը գերազանցելու, վճարումները վճարային հաշվով կամ Պայմանագրով նախատեսված պայմաններով և ժամկետում չվճարելու դեպքում,

7.2.2. փոփոխել Պայմանագրի պայմանները՝ այդ մասին Գևորդին ծանուցելով համակարգի կամ էլեկտրոնային փոստի միջոցով,

7.2.3. օրինական հիմքերով օգտագործել «Էլմասիս» համակարգի տեղեկատվությունը՝ գիտական կամ ծառայության որակը բարելավելու նպատակներով:

8. ԳՆՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Գևորդը պարտավորվում է.

8.1.1. կատարել ՕՖերտայով սահմանված բոլոր պահանջները,

8.1.2. Ծառայությունների փաթեթն օգտագործել Վաճառողի կողմից սահմանված օգտագործման ուղեցույցին համապատասխան,

8.1.3. կատարել վճարումներ մատուցված ծառայությունների համար՝ www.elmasys.com կայքում և (կամ) Պայմանագրով սահմանված պայմաններով ու կարգով:

8.2. Գևորդն իրավունք չունի որևէ երրորդ անձի փոխանցել ծառայությունների փաթեթը և դրան վերաբերող բոլոր տվյալները, ինչպես նաև կատարել այնպիսի գործողություններ, որոնք կվնասեն կապուղին, սերվերները կամ համակարգը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

9.1. Պայմանագրով ամրագրված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում Վաճառողի հիմնադրման (գրանցման) պետության օրենսդրությամբ (իրավունքով) և Միավորված ազգերի կազմակերպության 1980 թվականի ապրիլի 11-ի «Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի մասին» կոնվենցիայով սահմանված կարգով:

9.2. Վաճառողը պատասխանատվություն չի կրում Գևորդի կողմից համակարգ մուտքագրված տեղեկատվության համար:

9.3. Վաճառողը կամ Գևորդն ազատվում է ՕՖերտայի պայմանների խախտման համար պատասխանատվությունից, եթե այդպիսի խախտումը կատարվել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով (ֆորս-մաժոր), ներառյալ՝ պետական իշխանության մարմինների գործողություններ, հրդեհ, ջրհեղեղ, երկրաշարժ, այլ տարերային աղետներ, էլեկտրաէներգիայի բացակայությունը և (կամ) համակարգչային ցանցի աշխատանքի խափանումները, գործադուլները, քաղաքացիական հուզումները, անկարգությունները, ցանկացած այլ հանգամանքներ, որոնք չեն ներառվում թվարկվածի մեջ, ծագել են ՕՖերտայի պայմանագիրը կնքելուց հետո, որոնք Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել և որոնք կարող են ազդել Վաճառողի կողմից ՕՖերտայի պայմանագրի կատարման վրա:

9.4. ՕՖերտայի կապակցությամբ ծագած բոլոր վեճերը ենթական են լուծման բանակցությունների միջոցով, իսկ բանակցությունների միջոցով վեճերի չկարգավորման դեպքում՝ Վաճառողի հիմնադրման (գրանցման) պետության օրենսդրությամբ (իրավունքով) ամրագրված կարգով:

9.5. Համակարգի անգործության կամ թերի աշխատանքի կամ ծրագրային սխալների պատճառով Գևորդի կրած նյութական կամ բարոյական վնասը Վաճառողի կողմից չի փոխհատուցվում:

10. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10.1. Օֆերտայի պայմանագրով նախատեսված ցանկացած ծանուցում կարող է մի Կողմից ուղարկվել մյուս Կողմին Էլեկտրոնային փոստի միջոցով: Գնորդի Էլեկտրոնային փոստը նշվում է Վաճառողի կայքի համապատասխան բաժնում գրանցման տվյալներում, իսկ Վաճառողի Էլեկտրոնային փոստը նշված է Օֆերտայի Վաճառողի վավերապայմաններում:

10.2. Վաճառողը պարտավորվում է գաղտնի պահել Օֆերտայի շրջանակներում, այդ թվում՝ նաև Օֆերտայի պայմանագրի լուծումից հետո՝ առնվազն 20 (քսան) տարի, Գնորդից ստացված բոլոր տվյալները, բացառությամբ Կայքի «Մեր հաճախորդները» բաժնում իրենց մասին հակիրճ տեղեկատվության և համակարգի վերաբերյալ կարծիքների:

10.3. Գնորդը, ակցեպտավորելով Օֆերտան, տալիս է իր համաձայնությունը Կայքի գաղտնիության քաղաքականությանը:

10.3. Վճարման հաշվի հիման վրա Վաճառողին վճարված դրամական միջոցները ենթակա չեն վերադարձման:

10.4. Օֆերտայում կատարված փոփոխությունների ու լրացումների վերաբերյալ կազմված համաձայնագրերը, հավելվածները, Պայմանագիրը հանդիսանում են Օֆերտայի անբաժանելի մասը:

10.5. Օֆերտայի մի կետի անվավերությունը կամ փոփոխությունը չի հանգեցնում մյուս կետերի անվավերության կամ փոփոխության:

10.6. Պայմանագրի և Օֆերտայի միջև հակասություններ առաջանալու դեպքում գործում են Պայմանագրի դրույթները:

ՎԱՃԱՌՈՂ

«ՅԵՄՈՏԹ» ՍՊԸ

Ջասցե՝ ք. Երևան, Սիլիկյան թ. 4փ. 46

«Ամերիաբանկ» ՓԲԸ

support@elmasys.com

ՀՀ՝ 1570056638910100

ՀՎՀՀ՝ 01294966

Տնօրեն՝

Մ. Ավագյան